լենել, դաշոյնը իր ձեռքով իր սիրտը մխել։ Այո՛, այդպիսի տեսարաններ տեղի ունեցան փրկչական 1605 թուին, աշնան, երբ Պարսից վայրագ զօրքը քշում էր Հայերին։ Մօտ հազար հոգի Հայերից, այր եւ կին, փախչել պատսպարուել էին Գառնու գաւառի "Քոռադարայ" կոչուած ձորի անառիկ այրերի մէկի մէջ, որի անունն Խոչխոն էր, մի բարձրագագաթ տեղ։ Ամիրգունա խանն իր զօրքով եկաւ եւ որքան հրացան արձակել տուեց, չկարողացաւ առնել։ Զարահնար Պարսիկներին աջողուեց վերջապէս սարի գագաթից թագուն կերպով մի քանի զինաւորուած մարդ իջեցնել այրի դուռը, որոնք յանկարծ սուսերամերկ մտնելով բազմութեան մէջ, շփոթեցրին եւ սկսեցին կոտորել, մինչեւ մնացած Պարսիկներն եւս վրայ հասան։ Պարսիկները կոտորում էին միայն տղամարդերին եւ պառաւներին, եւ խնայում էին երիտասարդ կանանց, տղաներին եւ աղջիկներին իրանց անասնական կիրքը յագեցնելու համար։ Սակայն թշուառները տեսնելով, որ պէտք է պղծութեան գարշանքին մատնուին, լաւ համարեցին մահն անպատիւ կեանքից, եւ մայրն իր ձեռքով իր աղջկան անդունդը գահավիժելով, ինքն եւս ետեւից միանում էր նրան։

"Բազումք ի նոցանէ պատէին զերեսս փակեալս եւ ձորձով իւրեանց եւ յանբաւ բարձրութենէն ի յայրէ անտի ի վայր արկանէին զինքեանս եւ մեռանէին։ Եւ վասն զի ի մէջ ձորոյն էր մայրի անտառախիտ ծառոց, եւ ոմանց յայնց՝